ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 60-Լ

«02» 09 2025թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ գլխավոր դատախազության մարդու դեմ ուղղված հանցագործությունների գործերով վարչության ավագ դատախազի 1 հաստիքը նույն վարչության դատախազի 1 հաստիքով փոխարինելու, Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը նույն դատախազության ավագ դատախազի 1 հաստիքով փոխարինելու, Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների դատախազության դատախազի 1 հաստիքը նույն դատախազության ավագ դատախազի 1 հաստիքով փոխարինելու, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի դատախազության դատախազի հաստիքը Արարատի մարզի դատախազության դատախազի 1 հաստիքով փոխարինելու, ինչպես նաև Երևանի կայազորի զինվորական դատախազության դատախազի 1 թափուր հաստիքը Կապանի կայազորի զինվորական դատախազի տեղակալի հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և

Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 4-րդ գլխի 11-րդ կետի «Վարչության ավագ դատախազ 3» բառերը փոխարինել «Վարչության ավագ դատախազ 2» բառերով, իսկ 12-րդ կետի «Վարչության դատախազ 4» բառերը փոխարինել «Վարչության դատախազ 5» բառերով,

2) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 17-րդ գլխի 63-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 3» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 4» բառերով, իսկ 64-րդ կետի «Դատախազության դատախազ 3» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 2» բառերով,

3) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 19-րդ գլխի 71-րդ կետի «Դատախազության ավագ դատախազ 4» բառերը փոխարինել «Դատախազության ավագ դատախազ 5» բառերով, իսկ 72-րդ կետի «Դատախազության դատախազ 7» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 6» բառերով,

4) 1-ին հավելվածի 3-րդ բաժնի 22-րդ գլխի 84-րդ կետի «Դատախազության դատախազ 5» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 4» բառերով, «Ընդամենը 10» բառերը՝ «Ընդամենը 9» բառերով, իսկ 23-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 108» բառերը՝ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում 107» բառերով,

5) 1-ին հավելվածի 4-րդ բաժնի 25-րդ գլխի 96-րդ կետի «Դատախազության դատախազ 3» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 4» բառերով «Ընդամենը 13» բառերը՝ «Ընդամենը 14» բառերով, իսկ 33-րդ գլխի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 114» բառերը, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում 115» բառերով,

6) 1-ին հավելվածի 5-րդ բաժնի 39-րդ գլխի 144-րդ կետի «Դատախազության դատախազ 10» բառերը փոխարինել «Դատախազության դատախազ 9» բառերով, իսկ «Ընդամենը 15» բառերը՝ «Ընդամենը 14» բառերով,

7) 1-ին հավելվածի 5-րդ բաժնի 44-րդ գլխի 162-րդ կետի «Դատախազի տեղակալ 1» բառերը փոխարինել «Դատախազի տեղակալ 2» բառերով, իսկ «Ընդամենը 7» բառերը՝ «Ընդամենը 8» բառերով,

8) 1-ին հավելվածի 6-րդ բաժնի «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 108» բառերը փոխարինել «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների դատախազություններում դատախազների թիվը 107» բառերով, իսկ «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 114» բառերը, «ԸՆԴԱՄԵՆԸ՝ Մարզերի դատախազություններում դատախազների թիվը 115» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին և տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**